Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Երևանի Հ.Իսակովի անվան թիվ 132 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Առարկա՝ **Հայոց պատմություն**

Թեմա ՝ **«Հայաստանի առաջին հանրապետության պետականության ձևավորումն ու ամրապնդումը»**

Վերաապատրաստող մենթոր՝ Լիլիթ Գրիգորյան

Ուսուցիչ՝ Վեներա Մկրտչյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ---------- 5

ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԳԻՐԸ ---------- 10

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ---------- 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքի թեմա է ընտրվել «Հայաստանի առաջին հանրապետության պետականության ձևավորումն ու ամրապնդումը»: 1918թ. մայիսի 28-ին, բազմադարյա ընդմիջումից հետո, մեր հայրենիքի մի հատվածում վերականգնվեց հայկական պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում մեր երկրում տեղի ունեցած փոփոխությունները մեծացրել են հետաքրքրությունը հայոց պետականությունների պատմության, հատկապես առաջին հանրապետության պատմության նկատմամբ:

Թեման չափազանց **արդիական է**, մասնավորապես մեր օրերում: Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում հայտնված ժամանակակից Հայաստանի Հանրապետության առաջ նույն մարտահրավերներն են, ինչ 20-րդ դարասկզբին՝ դիմակայել պանթյուրքիզմի կործանարար վտանգներին, պահպանել մեր ինքնիշխանությունը, պայքարել նեղ անձնական և կուսակցական շահերի դեմ, դիվանագիտական ճակատում դրսևորել խոհեմություն և հեռատեսություն, հզորացնել բանակն ու զարգացնել տնտեսությունը: Ցավով պետք է նշել, որ գրեթե մեկ դար անց մենք, մեր քաղաքական միտքը, պետական գործիչներն ու կուսակցությունները այս հիմնախնդիրները լուծելու ուղիներ չեն գտել: Ստացվում է, որ մենք պատմությունից դասեր չենք քաղում, դոփում ենք տեղում, որի հետևանքով էլ առաջընթաց և զարգացում չենք կարողանում ապահովել, գնում ենք ձախողումների ու կորուստների հայտնի արահետով: Այս աշխատանքի **նպատակը** պատմությունից դասեր քաղելու, նույն սխալները չկրկնելու, միասնական, մեծագույն նվիրումով մեր ազգային և պետական խնդիրներ լուծելու անհրաժեշտության հրամայականի շեշտումն է: Եթե չսթափվենք, չմիավորվենք, վաղը կարող է ուշ լինել: Հնարավոր և անհնար բոլոր միջոցներով պետք է պահպանենք մեծագույն զոհողություններով ձեռք բերած անկախությունը, հզորանանք և առաջ շարժվենք: Այն ինչ չարվեց 1918-1920թթ. պետք է իրագործվի մեր օրերում:

Պատմական ի՞նչ իրադարձությունների, քաղաքական ի՞նչ պայմանների արդյունք էր Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը:

Պատմագրության մեջ կան մի քանի տեսակետներ.

ա) խորհրդահայ պատմագրությունը /Շ. Հարությունյան, Մ. Ներսիսյան, Վ. Պարսամյան/, պնդում էր, որ «Անդրկովկասը նվաճելու ու այն Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարի հենակետ դարձնելու նպատակով, օտարերկրյա իմպերիալիստները, 1918թ. մայիսի վերջին և հունիսին Անդրկովկասում ստեղծեցին բուրժուազգայնական երեք կառավարություններ, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը»:[1]

բ) թուրք պատմաբանները պնդում են, որ Հայստանի առաջին հանրապետությունը թուրքական վիրատվության, ողորմածության արդյունք է,

գ) դաշնակցական գործիչների /Ս. Վրացյան, Ա. Խատիսյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Դրո/ հուշագրություններում, հոդվածներում, ստեղծված պատմական գրականության մեջ առաջ է քաշվում հետևյալ միտքը՝ Հայաստանի առաջին հանրապետությունը ծնունդ էր Անդրկովկասում ստեղծված բարդ քաղաքական իրադրության և մայիսյան փառահեղ հաղթանակների: Այդ առիթով Դրոն գրում է. «Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի ճակատամարտերուն մեջ իր տարած անօրինակ յաղթանակներով՝ հայ ժողովուրդը տիրացավ անկախ և ազատ ապրելու անփոխարինելի բարիքին»:[2] Այս աշխատանքին մեծապես օգնել է «ՀՀ պառլամենտի օրենքները 1918-1920թթ» ժողովածուն, որում ամփոփված են առաջին հանրապետության երկու խորհրդարանների կողմից ընդունված օրենքներն ու իրավական փաստաթղթերը:

Պատմագրության մեջ ոչ մի հիմնահարց միակողմանի չպետք է մեկնաբանվի: Պետք է իշխեն սառը դատողությունը, կոնկրետ փաստերը, համադրվեն տարբեր աղբյուրներից վերցված տվյալներ, կատարվեն անհրաժեշտ եզրակացություններ: Այս աշխատանքում մենք առաջնորդվել ենք այս սկզբունքներով: Գնահատումների մեջ ձգտել ենք լինել ծայրահեղ զգույշ

[1] Վ. Պարսամյան, Շ Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն., էջ 424
[2] «Դրո», Երևան 1991թ., էջ 107-108

և չափավոր, քանզի հիմա՝ տասնամյակներ անց դյուրին է դատողություններ անել, քննադատել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1918թ. մայիսին թուրքական բանակները ներխուժել էին Արևելյան Հայաստան: Անդրկովկասի դաշնային հանրապետության կազմում գտնվող վրացիները և կովկասյան թաթարները թուրքերի հետ առանձին հաշտության եզրեր էին փնտրում, իսկ հայերը օրհասական վիճակում էին՝ թուրքական բանակները շարժվում էին դեպի Ալեքսանդրապոլ և Երևան:

Բաթումում սկսված թուրք-անդրկովկասյան բանակցությունների ժամանակ, մայիսի 11-ին, թուրքերը ծանր պայմաններ առաջադրեցին: Բաթումի Անդրկովկասյան պատվիրակությունը, գրավոր հանդես եկավ Բրեստ-Լիտովսկի պայմանների պահպանման պահանջով: Անդրկովկասյան պատվիրակությունը պնդում էր, որ բանակցություններին մասնակցեն նաև Թուրքիայի դաշնակիցները: Մայիսի 14-ին թուրքերը պահանջեցին «անմիջապես թույլ տալ, որ իրենց զորքերը Ալեքսանդրապոլով անցնեին դեպի Ջուֆա: Եվ դեռ պատասխան չստացած, հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա»:[3] Պանթյուրքիստները ձեռնամուխ եղան իրենց հաջորդ խնդրի իրագործմանը՝ արևելահայության ոչնչացմանը, որի նպատակը թուրքալեզու ժողովուրդների միավորումն ու միասնական պետության ստեղծումն է: Վեհիբ փաշան Բաթումում այդ առիթով Ա. Խատիսյանին ասել է. «Դուք կը տեսնեք, որ ճակատագիրը կը քշե Թուրքիան արևմուտքեն արևելք: Մենք հեռացանք Բալկաններից, կը հեռանանք նաև Աֆրիկայից, բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք, հոն է մեր արյունը, մեր կրենքը ու լեզուն: Մեր եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքեստան և Ադրբեջան : Եվ դուք հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա»:[4] 1918թ. մայիսի 15-ին Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և գեներալ Ֆոն Լոսովը կնքել էին գաղտնի համաձայնագիր՝

[3] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» Թեհրան, 1982, էջ 145
[4] Ա. Խատիսյան «Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը», Բեյրութ 1968, էջ 145

Վրաստանը անկախ հայտարարելու մասին: Նույնանման համաձայնություն էր ձեռք բերվել Թուրքիայի և մուսաֆաթականների միջև:

Գերմանիայի հովանավորությունը ստանալու հայերի բոլոր ջանքերը ձախողվեցին: Մայիսի 20-ին Բաթում ժամանեցին Հ. Օհանջանյանը և Արշ. Զոհրաբյանը, մայիսի 22-ին պաշտոնական խնդրանքով դիմեցին Ֆոն Լոսեվին, նա էլ իր հերթին՝ Կ. Պոլիսի գերմանական դեսպանին: Սակայն մայիսի 24-ին Լոսովը հայտնեց, որ թուրքերը մերժել են միջնորդության իր առաջարկը: Անդրկովկասյան դաշնությունը արագ քայլերով գնում էր դեպի քայքայում, հայերը մնացել էին մենակ և օրհասական կռիվներ էին մղում մահ ու ավեր սփռող թուրքական բանակների դեմ: Իրավիճակը անքան ծանր էր, որ Երևանի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը հրամայել էր ամրացնել Երևանի շրջակա երեք բլուրները. «Սրանք մեր վերջին ամրոցներն են: Բայց քաջահույս եմ, որ մինչև այդտեղ թշնամին չպետք է հասնի»:[5] Նույնիսկ Արամ Մանուկյանը Վեհափառին առաջարկում է Բյուրական մեկնել:[6] Կաթողիկոսը մերժում է: Հայ ժողովուրդը միասնական բռունցք դարձած շարունակում է իր հերոսամարտերը՝ Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում: Իսկ Թիֆլիսում, մայիսի 26-ին գումարվում է Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստը: Վրացիների պահանջով Սեյմը ինքնալուծարման մասին որոշում է ընդունում: Վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխներից Ի. Ծերեթելին հանդես եկավ հայտարարությամբ. «Վրաց ժողովուրդը մնացել է մենակ. Նրանից անջատվել են հայերը և կամովին՝ թուրքերը: Անդրկովկասի կեղծ ազատությունը խանգարում է վրաց ժողովրդին...»:[7] Ծերեթելիի երկար ճառը մտացածին փաստերի վրա էր հիմնված և իրականության հետ կապ չուներ: Հայերը այնպիսի ծանր ու անորոշ վիճակում էին, որ կառչել էին Անդրկովկասյան դաշնություն կոչված պետությունից, որտեղ իրենց շահերը երբևիցէ չէին պաշտպանվել: Կեսօրին Անդրկովկասյան Սեյմը ցրվեց, իսկ 5 ժամ անց, նույն դահլիճում վրաց ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը:

---

[5] «Արամը», Երևան, 1991թ., էջ 514
[6] «Արամը», Երևան, 1991թ., էջ 515
[7] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» Թեհրան 1982, էջ 151

Նույն օրը, մայիսի 26-ին երեկոյան, Բաթումում Խալիլ փաշան, վերջնագրի տեսքով, նոր հողային պահանջներ ներկայացրեց՝ իրենց հանձնել Նախիջևանի և Ախալցխայի գավառները:

Ավելին, Խալիլ փաշան պնդում էր, որ «թուրք զորքերի գործողությունները Կովասի հարավում որևէ դիմադրության չհանդիպեին»:[8] Մայսիսի 26-ի երեկոյան հրավիրվեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նիստ: Իրավիճակի ծանրությունը և փակուղային վիճակը հասկանում էին բոլորը: Անելիքների հարցում, սակայն, միասնություն չկար:

Հայ գործիչների մի մասը՝ Ա. Ահարոնյանը, Ստ. Մամիկոնյանը, Տ. Բեկզադյանը, Ռ. Տեր-Մինասյանը և սոցիալիստ-հեղափոխականները (էսէռ) վճռականորեն դեմ էին անկախությանը: Ս. Վրացյանը, Խ. Կարճիկյանը. Ա. Շահխաթունյանը, Ա. Երզնկյանը և ուրիշները այլ ելք չէին տեսնում՝ բացի անկախության հռչակումից: Քննարկումների ընթացքում մեղադրանքներ էին հնչում վրացիների հասցեին՝ դավաճանության, ժամանակավրեպ որոշման համար, իրականում պետք է խոստովանել, որ վրացիները ճիշտ ժամանակին և ամենաճիշտ որոշումն էին կայացրել: Հայոց կորուստների և պարտությունների հիմնական պատճառներից մեկը համահայկական կազմակերպվածության բացակայությունն է, որը հնարավորություն կընձեռեր ապահովելու համայն հայության (արևելահայության, արևմտահայության, գաղութահայության) կարողությունների և միջոցների համատեղումն և նպատակային օգտագործումը, որի շնորհիվ կստեղծեին անհրաժեշտ քանակի և որակի ուժեր, կդրսևորվեն հավաքական կամք և հավաքական միտք, կգործեին համաձայնեցված և պատասխանատվությամբ՝ դիմակայելու ժամանակի փորձություններին և մարտահրավեր-ներին: Սակայն չկար միասնականութուն, չկար քաղաքական, դիվանագիտական աշխա-տանքի փորձ, անհրաժեշտ կապեր և հարաբերություններ ստեղծելու և դրանք օգտագործելու հմտություն:

Անկախություն հռչակելու կողմնակից էին Բաթումից վերադարձած Քաջազնունին, Պապաջանյանը, Խատիսյանը: Իրավիճակը Թիֆլիսում մնում էր անորոշ և լարված: Մայիսի 28-ին որոշվեց Բաթում ուղարկել հաշտարար պատվիրակություն (Խաստիսյան, Պապաջան-

[8] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» Թեհրան 1982, էջ 150

յան, Քաջազնունի կազմով), որին տրվեց «բացարձակ լիազորություններ բանակցելու և հաշտություն կնքելու՝ հանուն անկախ Հայաստանի»:[9]

Մինչ Թիֆլիսում ընթանում էին խորհրդակցություններ, քննարկումներ, Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում հայ զինվորը հրաշքներ էր գործում. «Հաղթանակները այնքան էին ոգևորել գեներալ Սիլիկյանին, որ նա առաջարկում էր սրընթաց հարձակումով ազատագրել Ալեքսանդրապոլն ու Կարսը»:[10]

Մայիսյան հերոսամարտերի ոգեշնչողը, կազմակերողը Արամ Մանուկյանն էր: Բացառիկ նկարագրի տեր անձնավորություն էր նա՝ վճռական, ինքնավստահ, հայրենասեր և հայրենանվեր: «Եզակի տիպար մըն էր Արամը: Ան կրակիտ կը դառնար վտանգի պահուն, ու վճիռներ կարձակեր կատարյալ ինքնավստահությամբ: Գրեթե անսխալ էր՝ բոպեի պահանջը ըմբռնելու տեսակետեն»:[11] Արամ Մանուկյանը դրեց հայոց պետականության հիմնաքարերը, նա իրավամբ համարվում է Հայաստանի 1-ին հանրապետության հիմնադիրը: Նախկին պետական համակարգի քայքայվածության, անիշխանության, քաոսի, պատերազմի, սովի, հարյուր հազարավոր գաղթականների առկայության պայմաններում, նա կարողացավ կարգ ու կանոն ստեղծել, պետականության կայացման համար հիմքեր նախապատրաստել: «Երևանի շրջանում,- գրում է գեներալ Արարատյանը,- իշխանությունը ամուր գտնվում էր Արամ Մանուկյանի ձեռքում, որը համերաշխ գործում էր ժողովրդին և զորքին ոգեշնչող գեներալ Սիլիկյանի և Դրոյի հետ: եվ եթե մեզ՝ հայերիս հետ հաշվի են նստում այժմ՝ ապա ես դա բացառապես երեք անձանց եմ վերագրում՝ Արամին, գեներալ Սիլիկյանին, Դրոյին»:[12]

Մայիսի 29-ին գումարվեց ՀՅԴ Արևելյան և Արևմտյան Բյուրոների, ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի, Սեյմի և Ազգային խորհրդի դաշնակցական հատվածների (ֆրակցիա) միացյալ նիստը: Կրկին քննարկվեց քաղաքական վիճակը և որոշվեց՝ Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն, միջկուսակցական հիմունքներով կազմել կառավարություն և տեղափոխվել Երևան: Այս ժողովից հետո 1918թ. մայիսի 30-ին

[9] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» Թեհրան 1982, էջ 153
[10] Հայոց պատմություն. Խմբ. Հր. Սիմոնյան, Երևան 2000, էջ 334
[11] Ռոստոմ. Լիբանան 1979թ., էջ 22
[12] Հ. Գևորգյան «Դրո>>, Երևան 2000, էջ 261

հրատարակվեց հետևյալ հայտարարությունը, որը «թեև իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին»:[13]

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումով, ստեղծված նոր կացության հանդեպ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն»:[14] Բանաձևի հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր, սակայն ինչպես վկայում է Ռուբեն Տեր-Միասյանը, «հայաբնակ գավառներ» արտահայտության վրա պնդեց Ստեփան Մամիկոնյանը, որ իր միտքը պատճառաբանեց մի շարք խնդիրներով՝ «հայաբնակ գավառների, և ոչ Հայաստանի գերագույն իշխանության յայտարարելը ունէր իր իմաստը. Նախ դրանով կակնակուէր այն բոլոր հայաբնակ գաւառները, որ ինկած էին Ադրբեջանի և Վրաստանի մէջ. Քանի որ հյուսիսից դեռևս որոշ սահման չկար, երկորդ՝ նա չէր ուզեր Հայաստան անունը գործածելով, ընդառաջել Թորքիո այն ձգտումին, որ Հայկական հարցի կենդրոնը Տաճկաց Հայստանից փոխադրվի Անդրկովկասեան Հայաստանի մէջ»:[15]

Հաշվի էր առնվում դեռևս 1914թ.-ին թուրքերի կողմից արված առաջարկը. «Արարատյան Հայաստան ստեղծելու միտքը առաջին անգամ տաճիկներն են թելադրած՝ Բիւանետտին Շաքիրի, Օմար Նաճիի և Հելիմի պեյերի միջոցով, որոնք իբրև բանակցող, Իթթիհատի կողմից եկած էին Էրզրում 1914 թվականի օգոստոս վերջերին: Նրանք կառաջարկեին հոն գումարվող Դաշնակցություն իննի յանձնախմբին՝ ստեղծել Հայաստան՝ կենդրոն ունենալով Էջմիածինը միացնելով դրան Տաճկահայստանի որոշ մասեր»:[16]

Ինչևէ, 1918թ. մայիսի 30-ի փոխարեն անկախության հռչակման օր համարվեց մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ վճռվեց Բաթում ուղարկել պատվիրակության՝ բանակցություններ վարելու համար թուրքեր նախապայման էին դրել՝ անկախության հայտարարում:[17]

---

[13] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն>> Թեհրան, 1982 էջ 153
[14] Նույնը, էջ 153
[15] Ռուբէն «Հայ յեղափոխականի մը յիշատակները>> Երևան, 1990 h 7 էջ 137
[16] Նույնը, էջ 127
[17] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն>> Թեհրան, 1982 էջ 154

Այսպիսով, հայ ժողովրդի հինգդարյա պայքարը՝ հայոց պետականության վերականգնման համար, պսակվեց հաջողությամբ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Կիսակործան մի երկիր էր այն՝ ծվարած լեռների մեջ, աշխարհի մի խուլ անկյունում, ծանրաբեռնված գաղթականներով, որբերով, շրջապատված ատամ կրճտացնող թշնամիներով՝ անհաց, անօգնական, սոված, կոտորածի գեհենի միջով անցած մարդիկ: Մյուս կողմում կանգնած էին թուրքական բանակներըէ պանթյուրէիստական ծրագրերով ու հույսերով: Սակայն կար նաև հայ զինվոի և սպայի հերոսությունը, նվիրյալների մի ողջ սերունդ, որ ճանապարհը սկսել է Վանից, Սասունից: Սերունդ, որը իր անսահման հայրենասիրության, նվիրումի, քաջության շնորհիվ Մասիսների հովանու ներքո կերտեց իր պետությունը՝ Հայաստանի առաջին հանրապետությունը: Չափազանց մեծ է հայոց անկախ պետության վերականգման պատմական նշանակությունը:

ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԳԻՐԸ

1918թ. մայիսի 30-ին Բաթումում սկսվեցին բանակցություններ՝ հայկական և օսմանյան պատվիրակությունների միջև: Մի շարք նիստերից հետո կողմերը եկան համաձայնության և հունիսի 4-ին ստորագրվեց հաշտության պայմանագիր: Այն առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ ստորագրում է անկախ Հայաստանի պատվիրակությունը: Փաստորեն դրանով ճանաչվում է Հայաստանի հանրապետություն: Թուրքական կողմից պայմանագիրը ստորագրել են Խալիլ բեյը, Վեհիբ Ահմեդ փաշան, ՀՀ կառավարության անունից՝ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին, Մ. Պապաջանյանը: Բաթումում ստորագրված վավերագրերն էին՝ «Խաղաղության և բարեկամության դաշինքը Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև» և երեք հավելվածներ, որոնցից առաջինը վերաբերվում էր տարանցիկ փոխադրումներին, երկրորդը՝ սահմանակից շրջաններում առևտրին, երրորդը՝ կրոնական ազատության պայմաններին: Մի համաձայնությամբ էլ կարգավորվում էր գերիների փոխանակության հարցը: Նույն օրը Հայաստանի պատվիրակությունը մի այլ

համաձայնագիր էլ ստորագրեց թուրքերի, ադրբեջանցիների, վրացիների հետ երկաթուղային գույքի բաշխման մասին՝ ըստ երկաթգծի երկարության:

Բաթումի հիմնական դաշնագիրը կազմված էր 14 հոդվածներից: Առաջին հոդվածով հռչակվում էր «խաղաղություն և հարատև բարեկամություն երկու կառավարությունների միջև»:[18] Երկրորդ հոդվածով որոշվում էր Օսմանյան կայսրության և ՀՀ-ի սահմանները: Թուրքիային էին անցնում «Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան, Սուրմալուն, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների ¾, Երևանի գավառի կես և Շարուր-Դարալագյազի 1/5 մասը»:[19]

Մայիսի 26-ի վերջնագրի համեմատությամբ, այստեղ կային որոշ տարբերություններ, թուրքերը զիջեցին Համամլու-Աշտարակ խճուղին, որով մոտ 1000կմ^2 տարածություն ավելացավ ՀՀ-ին: Չորրորդ հոդվածով «Օսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում էր զենքի ուժով օգնություն հասցնել ՀՀ կառավարության, այն դեպքում, երբ վերջինս կխնդրի նրան այդ մասին՝ երկրում կարգ ու անդորրություն ապահովելու համար»:[20] Այս հոդվածը փաստորեն, հնարավորություն էր ընձեռում Թուրքիային ցանկացած առիթ օգտագործել ՀՀ-ի ներքին գործերին միջամտելու և տարածքը գրավելու: Իսկ մահմեդականների մեծ քանակը ՀՀ-ի տարածքում դրա հնարավորությունը ընձեռում էր: 5-րդ հոդվածով ՀՀ-ի կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքում հակաթուրքական խմբավորումների կազմավորում: Թուրքերը երևի հայոց բանակը և երկրապահ ջոկատները նկատի ունեին:

Վեցերորդ հոդվածը վերաբերվում էր Հայաստանում ապրող մահմեդականների կրոնական և ավանդութային խնդիրներին. «սուլթանի անունը պետք է յիշուէր մահմեդականների հասարակական աղոթքների մէջ»:[21] Յոթերորդ հոդվածը վերաբերվում էր հյուպատոսական և առևտրական խնդիրներին, ութերորդը՝ երկաթուղային, իններորդը՝

[18] Հայկական հարց (հանրագիտարան) էջ 72
[19] Պարսամյան, Հարությունյան «Հայ ժող. պատմություն>> էջ 420
[20] Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն>> Թեհրան, 1982 էջ 155
[21] Նույնը, էջ 156

փոստ-հեռագրատան, տասներորդը՝ սահմանամերձ շրջանների բնակիչների մյուս երկիրանցնելու իրավունքների խնդիրներին:

Չափազանց ծանր էր և ոչ մի քննադատություն չէր դիմանում 11-րդ հոդվածը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր բոլոր միջոցները գործադրել՝ Բաքվից հայկական զորամասերը հեռացնելու համար: Պետք է շեշտել, որ ՀՀ կառավարություն ոչ մի իրավական հիմք չուներ այդ քայլերը կատարելու, չուներ նաև բարոյական իրավունք: Դա նշանակում էր Բաքվի հայ բնակչությանը թողնել բախտի քմահաճույքին: Թե ինչ կատարվեց հետագա ամիսների ընթացքում Բաքվում հայտնի է բոլորին:

Ըստ հավելվածների թուրքերը իրավունք էին ստանում պատերազմի դեպքում Հայաստանի տարածքով զորք տեղափոխել, հայ գերի զինվորները կարող էին վերադառնալ Հայաստան: Կարսի և Բաթումի շրջանների հայ գաղթականները կարող էին վերադառնալ իրենց տները, իսկ թուրքահայերի վերադարձի խնդիրը կարգավորելու էր ընդհանուր պատերազմի ավարտից հետո: Թուրքական կառավարությունը իրավունք էր վերապահում Հայաստանում ունենալ իր ռազմական կոմիսարները, որոնք հետևելու էին խճուղային ճանապարհներով թուրք զինվորների անարգել փոխադրումներին: Բաթումի պայմանգրի ստորագրումը միանշանակ չընդունվեց: Հնչել են բազմաթիվ տեսակետներ: Հայտնի էր Սիլիկյանի դիրքորոշումը՝ նա կարծում էր, որ պետք էր զարգացնել ռազմական հաջողությունները և ազատագրել Ալեքսանդրապոլն ու Կարսը. «Ես այդ դաշնագիրը չեմ ճանչնար, սա դաշնագիր չէ, այլ խայտառակություն».-հայտարարեց Անդրանիկը:

Ավելի պարտվողական տեսակներ են հնչել: Զորավար Բեդժանբեկովը նույնիսկ կարծիք էր հայտնել, որ «Եթե տաճիկները ցանկանան վերցնել Երևանը, մենք պետք է տեղի տանք, քանի որ դիմադրել չենք կարող»: Թե այդ դեպքում ուր էր պատրաստվում գնալ Բեդժանբեկովը կնոջ և աղջիկների հետ անհայտ էր:

Ի վերջո, եզրակացությունը մեկն է՝ պայմանագիրը չափազանց ծանր պայմաններ էր պարտադրում հայկական կողմին, երբեմն՝ բացարձակ անընդունելի: Սակայն Բաթումի պայմանագիրը պարտադրված էր ռազմական գերիշխանություն ունեցող Թուրքիայի կողմից և

ստորագրվել էր Անդրկովկասում թուրքական հարձակման պայմաններում: Մայրաքաղաքից 7 կմ հեռու երևում էին թուրքական թնդանոթները: Պայմանգիրը մի քանի ամիս անց չեղյալ հայտարարվեց:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ցեղասպանության արհավիրքից, պատմական հայրենիքի մեծագույն մասի կորստից հետո հայ ժողովուրդն իր մեջ ուժ գտավ կերտելու անկախ պետականություն։ «Ցնծութեան աղաղակներով և ծափերով չընդունուեց հանրապետութեան ծնունդը։ Ընդհակառակը, շատերի համար նա նկատւում էր անժամանակ ծնունդ»։[22] Շատերին անհավանական էր թվում, որ հնարավոր է ստեղծել անկախ պետություն, իշխանության մարմիններ, բանակ։ Բայց մեր ժողովուրդը եղեռնասկիզբ դարը հատեց և առաջ անցավ՝ չնայած զարհուրելի պայմաններին, կազմվեց կառավարություն, ստեղծվեցին դատական, տեղական ինքնակառավարման մարմիններ։ Հայաստանի անկախության հռչակումից հետո և Բաթումի պայմանագրի կնքումից հետո Թիֆլիսում կազմվեց ՀՀ-ի առաջին կառավարություն՝ ճարտարապետ ՀՅԴ անդամ Հովհաննես Քաջազնունու վարչապետությամբ։ Ժողովրդական կուսակցությունը, Միքայել Պապաջանյանի գլխավորությամբ, կտրականապես մերժեց Հովհաննես Քաջազնունու միասին կառավարություն կազմելու առաջարկը։ Պատճառաբանվեց, որ ՀՅԴ-ն իշխանությունը պետք է հանձնի ՀԺԿ-ին, քանի որ .

ա) դաշնակցությունը պատասխանատու է հայ ժողովրդին պատուհասած աղետների համար,

բ) թուրքերի հետ հարաբերություններ կառուցելու գործում անհրաժեշտ է նոր ուժ և այդ ուժը կարող է լինել Ժողովրդական կուսակցությունը։

Սիմոն Վրացյանը այդ առիթով գրում է . « Բայց վերջին տեսակէտը, անշուշտ, որոշ ճշմարտություն պարունակում էր իր մէջ ՝աւելի լաւ կըլինէր, եթէ այդ ռոպէին մէջտեղ գար ազգային մի նոր ուժ, որ կկարողանար, առաւել կամ պակաս ձեռնահասութեամբ, փոխարինել Հ.Յ. Դաշնակցութեանը։ Այդպիսի ուժ գոյութիուն չունէր, դժբախտաբար»։[23]

Այժմ, գրեթե մեկդարյա հեռավորությունից դժվար է վստահաբար պնդել, թե որ մոտեցումն էր ճիշտ։ Բայց, որ ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի արդյունավետ, կուսակցական նեղ շահերից և

---

[22] Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն>>, էջ 177

[23] Նույնը՝ էջ 178

զզվռտոցից վեր համագործակցությունը նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը կտաներ զարգացման ճանապարհով, անվիճելի է։ Երկար քննարկումների հետո կազմվեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարությունը՝ հետևյալ կազմով. վարչապետ՝ Հ.Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ա.Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Ա.Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ.Կարճիկյան, զինվորական նախարար՝ Հ.Հախվերդյան։ Թիֆլիսում մի շարք ընթացիկ խնդիրներ (ֆինանսական, դիվանագիտական) կարգավորելուց հետո, կառավարությունը տեղափոխվեց Երևան։ Մինչ կառավարության ժամանումը, Երևանում պետական կառույցներ ստեղծելու, կարգուկանոն հաստատելու ուղղությամբ ահռելի աշխատանք էին կատարել Արամ Մանուկյանը և Երևանի Ազգային խորհուրդը։ Արամ Մանուկյանի (Սարգիս Հովհաննիսյան) կատարած աշխատանքը արժևորելով՝ պետք է նշել, որ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրը նա է։ Հայաստանի առաջին հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն էր, կառավարման այս ձևը ենթադրում էր, որ գերագույն իշխանությունը պատկանում է ընտրովի, օրենսդիր, բարձրագույն իշխանությանը՝ խորհրդարանին։ Խորհրդարանական հանրապետությունը հանդես է գալիս որպես հասարակական և ազգային քաղաքական տարբեր խմբերի ներկայացուցչություն՝ իրականացնելով օրենսդիր, կարգավորիչ, կազմակերպչական և այլ գործառույթներ։ Հասարակական, ազգային և քաղաքական տարբեր խմբերի առկայությունը Հայաստանի առաջին հանրապետությունում շատ ցայտուն էր՝ արևմտահայեր, արևելահայեր, մուսուլմաններ, ռուսներ, բազմաթիվ կուսակցություններ։ Սրանով էր պայմանավորված պառլամենտարիզմի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում։ Ցանկանալով ընդգծել Հայաստանի առաջին հանրապետության տարածքում ապրող բնակչության իրավահավասարությունը, նրա «ռամկավար-հանրապետական կարգը», Հովհաննես Քաջազնունին նշել է . «Մեր պետութիւնը, ի միջի այլոց, կոչում է որ թէ հայկական, այլ Հայաստանի Հանրապետութիւն, որը ցույց է տալիս, որ մեր պետութիւնը հայրենիք է նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդների համար»։ Նշված հանգամանքի, արտաքին և ներքին բարդ իրավիճակի պատճառով Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական համակարգի ձևավորումը ընթացել է տնտեսական,

քաղաքական, սոցիալական և ազգային ծայրահեղ բարդ պայմաններում: Այս ամենին ավելանում էր պետական շինարարության և քաղաքական գործունեության փորձի բացակայությունը: Դարեր առաջ պետականության կորստի պատճառով խոր արմատներ էին ձգել ստրկամտությունը և անմիաբանությունը, դրան գումարած սով, համաճարակ և այլն: Այս առումով երկիրը իրոք «անձև քաոս և ավերակների կույտ էր»: Նշված պայմանների և պետահիրավական դաշտի լիակատար բացակայության պայմանների պատճառով անհնար էր համաժողովրդական ընտրությունների միջոցով խորհրդարան ձևավորել: «Թիֆիսի և Երեւանի Ազգային Խորհուրդների մի շարք խառը նիստերում վերջնական ձև ստացան Ազգային խորհուրդն ու կառավարությունը: Որոշուեց, հակառակ ժողովրդականների քուեի, եռապատկել Ազգային Խորհրդի անդամների թիւը, հրաւիրել այազգիների՝ թուրքերի, եզդիների ու ռուսների ներկայացուցիչներին: Այս ձևով կազմուեց Հայաստանի օրէնսիր մարմինը ՝ Հայաստանի խորհուրդ անունով»:

1918 թ.-ի օգոստոսի 1-ին, Երևանի քաղաքային ակումբի դահլիճում բացվեց խորհրդարանի առաջին նիստը, բացի պատգամավորներից ներկա էին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի ներկայացուցիչները, Պարսից հյուպատոսը, ռուսական, մահմեդական ազգային խորհուրդների, հայ զինվորականության և մամուլի ներկայացուցիչները: Հայաստանի խորհրդի նախագահն էր Ավետիք Սահակյանը, որի ճառից հետո խորհրդարանի շենքի վրա բարձրացվեց եռագույնը:

1919թ.-ի գարնանը մշակվեց Հայաստանի պառլամենտի ընտրության մասին օրենք: 20 տարին լրացած ցանկացած քաղաքացի, առանց սեռի, կրոնի և ազգի խտրության ընտրական իրավունք ուներ: Ընտրությունը փակ էր, գաղտնի, ուղղակի: 1919թ.-ի ամռանը տեղի ունեցած ընտրությունների արդյունքում ձևավորված խորհրդարանը ունեցավ 80 պատգամավոր. 72-ը՝ ՀՅԴ-ից, 4-ը՝ ԷսԷռներից, 3-ը՝ թուրք և մեկ անկուսակցական: Խորհրդարանի նախագահ նշանակվեց Ավետիս Ահարոնյանը: Կազմվեց խորհրդարանական 12 հանձնաժողով, վարչապետ ընտրվեց Ալեքսանդր Խատիսյանը: Ցավով պետք է նշել, որ խորհրդարանի և կառավարության միջև առկա էր հակամարտություն:

Պետական իշխանության ձևավորման և կայացման գործում կարևոր նշանակություն ուներ դատական համակարգի ստեղծումը։ Սկզբում ժամանակավորապես, որոշ փոփոխություններով պահպանվեցին Ռուսական կայսրության օրենքները։ Օրինակ ՝ 1918թ.-ի հոկտեմբերի 23-ին Հայաստանի խորհրդարանը հաստատեց «Դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին» օրենքը, որում մասնավորապես նշվում էր. «Պետական օրենքների առաջին հատորի առաջին մասի 22-րդ հոդվածում «Կայսեր» և «Կայսերական մեծության» խոսքերի տեղը դնել «Հայաստանի Հանրապետություն»։[24] Կարճ ժամանակ անց ընդունվեցին հայ ազգային պետական նկարագրին բնորոշ օրենքներ և իրավական փաստաթղթեր։

Ստեղծվեց եռաստիճան դատական համակարգ՝ շրջանային դատարան, Դատաստանական պալատ և Սենատ։ 1918թ.-ի դեկտեմբերի 6-ին ընդունված օրենքի համաձայն « Երևան քաղաքում բացվում է Դատաստանական ատյան երկու դեպարտամենտներով՝ քաղաքացիական և քրեական։ Երևան քաղաքում բացվում է Սենատ, բաղկացած երկու վճռաբեկ դեպարտամենտներից»։[25] Ստեղծվեց հաշտարար դատարան, հաստատվեց օրենք երդվյալ ատենակալների դատարան հիմնելու վերաբերյալ։

1918թ.-ի նոյեմբերին ավարտվեց Առաջին աշխարհամարտը, թուրքական զորքերը սկսեցին դուրս բերվել Անդրկովկասից։ Թուրքերի հեռանալուց հետո Հայաստանի Հանրապետության տարածքը սկսեց ընդլայնվել։ 1920թ.-ի մայիսի 25-ին Հայաստանի Հանրապետությունում կատարված վարչական բաժանման արդյունքում երկրի տարածքը բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Սյունիքի, Շիրակի և Վանանդի (70000 կմ^2, 2 միլիոն բնակչություն)։ «Արարատյան նահանգի մեջ մտնում են՝ Երևանի, Սուրմալուի, Նոր Բայազետի, Դառալագյազի, Շարուրի և Նախիջևանի գավառներն ամբողջությամբ, Էջմիածնի գավառը՝ առանց Թալինի գավառակի։ Շիրակի նահանգի մեջ մտնում են՝ Էջմիածնի գավառի Թալին գավառակը, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի գավառներն ամբողջությամբ, Ղարսի գավառի Ե. գավառն ամբողջությամբ, Ա. և Գ. գավառակների որոշ մասերը սկսած Ներքին Չլդր լճի հարավային ափի Դաշկեփրի գյուղից, խճուղիով հարավ՝ Ներքին Պարկետից կտրելով

[24] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ), Երևան 1998, էջ 13
[25] Նույնը՝ էջ 22

երկաթուղին ուղիղ գծով մինչև Դայնալիխ գյուղը, Ախալքալակի և Բորչալուի գավառների հայկական մասերը և Դիլիջանի գավառը։ Վանանդի նահանգ։ Սրա մեջ մտնում են Ղարսի նախկին շրջանը, բացի Ղարսի շրջանի այն մասերի, որոնք միացվում են Շիրակի նահանգին։ Սյունյաց նահանգ։ Սրա մեջ մտնում են Զանգեզուրը և Ղարաբաղը, Վարանդան, Գյուլիստանը, Դիզակը, Ջրաբերդը և Գանձակի գավառի հայկական մասերը»։[26] Ստեղծվեցին տեղական ինքնակառավարման մարմիններ։

Անկախ պետության կայացման, պահպանման և հզորացման գործում կարևորագույն դեր ունի ազգային բանակի ստեղծումը։ Կարգապահ և մարտունակ բանակը, պետության և ազգի անվտանգության երաշխավորն է։ Ռուսական բանակի կազմում գոյություն ունեցող Հայկական կորպուսի հիման վրա 1918թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեց սեփական զինված ուժեր։ Դեռևս 1918թ.-ի մարտի 31-ի տվյալներով Հայոց բանակային կորպուսն ուներ 19590 մարտիկ, որից 818-ը՝ սպա։ Մայիսյան հերոսամարտերի ընթացքում այդ թիվն ավելացել էր։ Բայց Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը կարող էր ունենար մեկ հետևակային դիվիզիա, որի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Սիլիկյանը։ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրամանատարն էր գեներալ Թովմաս Նազարբեկյանը։ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո չեղյալ հայտարարվեց Բաթումի պայմանագիրը, որի արդյունքում 1919թ.-ի հունվարից կատարվեց 20-25 տարեկան երիտասարդների զորակոչ։ Համալրվեց բանակի զինտեխնիկան։ 1920թ.-ի հունվարին բանակի թիվը հասավ 25 հազարի, իսկ աշնանը հայ-թուրքական պատերազմի ժամանակ՝ 40 հազարի։ Չնայած կատարած ահռելի աշխատանքին, ցավով պետք է նշել, որ բանակի մարտական ոգին բարձր չէր, ցածր էր կարգապահությունը, իսկ բոլշևիկների քայքայիչ գործունեությունը բանակում վիճակը էլ ավելի վատթարացրեց և նպաստեց զինված ուժերի անհաջողություններին։

Ամփոփելով՝ ուզում ենք նշել, որ պատմաքաղաքական բարդ ժամանակներում վերածնված հայոց պետականության դերը չափազանց մեծ է մեր պատմության մեջ։ Մեր ժողովրդի և կուսակցություններ քաղաքական ռոմանտիկան դարձավ իրականություն, ծանր

[26] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ), Երևան 1998, էջ 313

փորձություններով լի իրականություն։ Ի վերջո, պետականության կերտումը, այն էլ 20-րդ դարասկզբի բարդ ժամանակահատվածում մեղմ ասած դյուրին գործ չէր։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1918թ. գարնանը թուրքական բանակները ներխուժել էին Արևելյան Հայաստան։ Անդրկովկասի դաշնային հանրապետության կազմում գտնվող վրացիները, կովկասյան թաթարները թուրքերի հետ առանձին հաշտություն էին ձգտում կնքել, հայերը չափազանց ծանր վիճակում էին՝ թուրքական բանակները շարժվում էին դեպի Արարատյան դաշտ։

Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում հայ զինվորը հրաշքներ գործեց, կասեցվեց թուրքերի հարձակումը։ Հինգդարյա ընդմիջումից հետո 1918թ. մայիսի 28-ին վերընձյուղվեց հայկական պետականությունը։ Նվիրյալների մի ողջ սերունդ՝ իր անսահման հայրենասիրության, քաջության շնորհիվ Մասիսների հովանու ներքո կերտեց իր պետությունը՝ Հայաստանի 1-ին Հանրապետությունը։

Հայաստանի 1-ին Հանրապետությունը ծնունդ էր Անդրկովկասում ստեղծված բարդ քաղաքական իրադարձությունների և մայիսյան հերոսամարտերի։ Չափազանց մեծ է հայոց պետականության վերականգնման պատմական նշանակությունը։ Անկախության հռչակումը ցնծությամբ չընդունվեց։ Քչերն էին հավատում նորահռչակ հանրապետության կենսունակությանը, բայց հաղթահարելով վիթխարի դժվարություններ, դրվեցին հայոց պետականության հիմքերը։ Թուրքական արշավանքը կասեցնելու նպատակով կնքվեց Բաթումի չափազանց ծանր պայմանագիրը, սակայն պետք է հիշել, որ այն պարտադրված էր ռազմական գերիշխանություն ունեցող Թուրքիայի կողմից և ստորագրվել է Անդրկովկասում թուրքական հարձակման պայմաններում։ Բացի այդ ակնհայտ էր, որ աշխարհամարտը մոտենում էր ավարտին, և այդ պայմանագիրն ունի ժամանակավոր բնույթ։ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր իրավամբ համարվում է Արամ Մանուկյանը, որը մինչև կառավարության ժամանումը, իշխանական բոլոր գործառույթները կենտրոնացրել էր իր

ձեռքում։ Քաջազնունու կառավարությունը նպատակադրվեց կասեցնել տնտեսական և վարչական կյանքի քայքայումը։ Իշխանության մարմինների ստեղծումով երկրում հաստատվեց կարգ ու կանոն, վերականգնվեցին հաղորդակցության ուղիները։ Ցանկացած երկրի գոյության և հզորության երաշխիքը ուժեղ և մարտունակ բանակն է։ Ներքին և արտաքին անընդմեջ բախումների բովում ծնվեց հայկական բանակը։ Ցավոք, հայկական բանակում չհաջողվեց հաստատել բարձր կարգապահություն և մարտունակություն։ Դրան մեծապես նպաստեց զինված ուժերում բոլշևիկների ապազգային քայքայիչ գործունեությունը։

Մեր ժողովրդի դարավոր երազանքն ու մեր կուսակցությունների քաղաքական ռոմանտիզմը դարձավ իրականություն։

ՀՀ խորհրդարանը և կառավարությունը առաջնորդվում էին պառլամենտարիզմի արևմտյան մոդելով՝ ցանկանալով երկիրը դարձնել խորհրդարանական հանրապետություն։ Սկզբում խորհրդարանը կատարում էր իր դերը, բայց ժամանակի ընթացքում, դեպքերի և հանգամանքների բերումով, սահմանադրության բացակայության, երկրի օրենսդիր, դատական և գործադիր իշխանությունների ոչ հստակ տարանջատման, ՀՅԴ-ի մենիշխանության ձգտմն, կառուցողական ընդդիմության բացակայության պատճառներով պետական համակարգը սկսեց ճեղքի տալ։ Ներքին և արտաքին գործոնները՝ հայ-թուրքական պատերազմը, Ռուսաստանի քեմալամետ քաղաքականությունը, մեր քաղաքական փորձի պակասը, հայրենասիրության պակասը օրհասական վիճակ ստեղծեցին և քայքայեցին պետականության հիմքերը։

Բացի վերը նշված պատճառներից, Հայաստանի առաջին հանրապետության կործանման կարևորագույն պատճառը այն էր, որ մենք չկարողացանք հաղթահարել մեր հատվածական մտածողությունը և կործանեցինք մեր փխրուն պետականությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Պարսամյան, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979
2. Ա. Անդրանիկյան, «Դրո», Երևան 1991
3. Ս. Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» Թեհրան, 1982
4. Ա. Խատիսյան «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», Բեյրութ 1968
5. «Արամը», Երևան, 1991թ.
6. Հր. Սիմոնյան, Հայոց պատմություն. Երևան 2000
7. Հ. Գևորգյան «Դրո», Երևան 2000
8. Ռուբէն «Հայ յեղափոխականի մը յիշատակները» հ 7 Երևան, 1990
9. Հայկական հարց (հանրագիտարան) Երևան, 1996
10. Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ), Երևան 1998